

Հարգելի Անուշ Էվոյան

Ստորև ներկայացնում ենք Ձեր 18.03.2016թ. հարցման պատասխանը.

1-2. Հարցեր

Ի՞նչ արտադրական հզորությունով է աշխատում «ACP» ընկերությունը 2016թ. և ի՞նչ արտադրանք է տալիս: Ինչքա՞ն է եղել արտադրության ծավալը մինչև 2016թ. և ի՞նչ փոփոխություններ է կրել այն:

Պատասխան

2015թ. գործունեության միջինացված ցուցանիշներով Այլավերդու պղնձաձուլական գործարանը ամսական վերամշակել է շուրջ 4,050 տոննա խտանյութ և արտադրել 900-950 տոննա անգուտ պղինձ:

2016թ. առաջին երկու ամիսների միջինացված ցուցանիշներով՝ վերամշակվող խտանյութի քանակն էապես չի փոխվել: Գործարանն ամսական վերամշակել է շուրջ 4,100 տոննա խտանյութ և արտադրել է շուրջ 1,160 տոննա անգուտ պղինձ: Հարկ է նշել, որ վերջնական արտադրանքի քանակի ավելացումը պայմանավորված է ստացվող և վերամշակվող խտանյութում պղնձի համեմատաբար բարձր պարունակությամբ:

3. Հարց

Խնդրում եմ տրամադրել նոր նախաձիգանցքի և ծխնելույզի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով ընկերության պատվերով «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության մասնագետների կողմից իրականացվող հեռացվող գազերի բաղադրության և աերոդինամիկական պարամետրերի ամենամսյա մոնիտորինգի տվյալները:

Պատասխան

2016թ. հունվար-փետրվար ամիսներին Այլավերդու պղնձաձուլական գործարանի գործունեության արդյունքում մթնոլորտ արտանետվող գազերում եղել են աղտոտիչների հետևյալ քանակները.

| Նյութի անվանումը | Քանակը, տ |
|-------------------------|------------------|
| Ծծմբային անհիդրիդ | 5959.7 |
| Անօրգանական փոշի | 32.4 |
| Կապար | 0.23 |
| Արսեն | 0.07 |
| Տիմկ | 0.23 |
| Պղինձ | 3.09 |
| Սանգանի օքսիդ | 0.015 |

Աերոդինամիկական պարամետրերի՝ Այլավերդու պղնձաձուլական գործարանի ծխնելույզից նմուշարկմամբ կատարվող ամենամսյա մոնիտորինգի արդյունքներով 2016թ. հունվար-փետրվար ամիսներին գրանցվել են հետևյալ ցուցանիշները.

| Նմուշարկման ամսաթիվ և ժամ | T _գ ազ °C | Գազատարովանցողությունը մալժավալը L ₀ մ ³ /ժամ | Գազի արագություն W մ/վրկ | Փոշու կոնցենտրացիա Z գր/մ ³ | Գազատարովանցողությունը փոշու կշիռը կգ/ժամ |
|--------------------------------------|--------------------------------|--|------------------------------------|--|---|
| 20.01.2016 10 ⁰⁰ | 18 3 | 111,769.1 | 10.3 | 0.308 | 34.38 |
| 20.01.2016 10 ³⁰ | 18 3 | 109,916.0 | 10.1 | 0.259 | 28.44 |
| 20.01.2016 11 ⁰⁰ | 18 3 | 110,308.9 | 10.1 | 0.298 | 32.84 |
| 20.01.2016 11 ³⁰ | 18 0 | 117,225.5 | 10.7 | 0.263 | 30.88 |
| 20.01.2016 12 ⁰⁰ | 18 0 | 116,854.3 | 10.7 | 0.223 | 26.39 |
| 20.01.2016 12 ³⁰ | 18 0 | 117,596.1 | 10.7 | 0.202 | 23.71 |
| Միջին՝ հունվարի համար | 18 2 | 113,945.0 | 10.4 | 0.258 | 29.44 |
| 11.02.2016 10 ⁰⁰ | 18 9 | 102,878.1 | 9.5 | 0.116 | 11.94 |
| 11.02.2016 10 ⁴⁵ | 19 1 | 103,380.9 | 9.6 | 0.125 | 12.92 |
| 11.02.2016 11 ¹⁵ | 19 0 | 103,182.2 | 9.6 | 0.152 | 15.66 |
| 11.02.2016 12 ³⁰ | 20 2 | 88,450.1 | 8.4 | 0.120 | 10.63 |
| 11.02.2016 13 ¹⁵ | 20 5 | 88,758.0 | 8.5 | 0.213 | 18.92 |
| 11.02.2016 14 ⁰⁰ | 20 4 | 90,012.4 | 8.6 | 0.229 | 20.58 |
| Միջին՝ փետրվարի համար | 19 7 | 96,110.3 | 9.1 | 0.157 | 15.1 |

4. Հարց

Ի՞նչ աշխատանքներ են կատարվում օդային ավազան արտանետումների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու և չկազմակերպված (կոնսվերտերային) արտանետումները վերահսկելու և նվազեցնելու ուղղությամբ:

Պատասխան

Աշխատանքներ են տարվում ծխատարի և ծխնելույզի պատշաճ տեխնիկական վիճակը և կայուն գործառնությունն ապահովելու ուղղությամբ: Իրականացվում են մետալուրգիական արատադրամասի ասպիրացիոն համակարգի արդյունավետության

բարձրագույն նախապատրաստական աշխատանքներ: 2016թ. ապրիլից նախատեսվում է կրկնակի ավելացնել ասպիրացիոն համակարգի հզորությունը, ինչի արդյունքում ակնկալվում է ապահովել մետալուրգիական արտադրամասի և արտադրամասին անմիջապես հարող տարածքների գազոսվածության էական նվազում:

Հարգանքով՝
Վահրամ Ավագյան
Մամուլի խոսնակ
«Վայլերս» խմբի ընկերություններ
23.03.2016թ.